ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արեգ Միքայելյանը

Սույն թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արեգ Միքայելյանը:

Արեգ Միքայելյանը ներկայացրեց Բյուրականի աստղադիտարանի զարգացման ծրագիրը: Նա նշեց Բյուրականի աստղադիտարանի՝ 2022-2030 թթ., 2022-2040 թթ. ռազմավարությունների մշակման անհրաժեշտության մասին, կարևորեց միջծյուղային գիտությունների զարգացումը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և բուհ-երի հետ համագործակցությունը, միջազգային խոշոր ծրագրերին մասնակցությունը, երիտասարդ մասնագետների ներգրավումը:

Արեգ Միքայելյանը ծնվել է 1962 թ. Երևանում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: Նրա գիտական նախասիրություններն են՝ աստղագիտական շրջահայություններ, ակտիվ գալակտիկաներ, բազմաալիքային, օպտիկական, ենթակարմիր աստղագիտություն, սպիտակ թզուկ և պայթյունային փոփոխականներ, աստղագիտական տվյալների շտեմարաններ և վիրտուալ աստղադիտարաններ, աստղահինֆորմատիկա, տիեզերական աստղագիտություն, պատմամշակութային աստղագիտություն, աստղագիտական եզրաբանություն:

Արեգ Միքայելյանի տպագրած աշխատանքներն են՝ 156 հոդված գրախոսվող ամսագրերում, որից 67-ը՝ միջազգային, 15 հոդված գրքերում, 119 հոդված գիտաժողովի նյութերի ժողովածուներում, 22 էլեկտրոնային կատալոգ, 8 գիրք/գրքույկ, 12 գրքերի խմբագրում, 10 նախատիպ, գիտաժողովների 30 թեզիս, 14 գիտահանրամատչելի հոդված, 20 տեղեկատվական հոդված:

Արեգ Միքայելյանը ղեկավարել է ՀՀ գիտության պետական կոմիտեի թեմատիկ, ANSEF, CRDF ARP1-2849-YE-06, ISTC A-1451, A-1606, CNRS, DFG, DAAD, NASA, COST, Erasmus + և այլ դրամաշնորհային ծրագրեր:

Արեգ Միքայելյանն անդամակցում է Միջազգային աստղագիտական միությանը (ՄԱՄ, IAU), Եվրոպական աստղագիտական ընկերությանը (EAS), Եվրոպական ֆիզիկոսների ընկերությանը (EPS), Եվրասիական աստղագիտական ընկերությանը (EAAS), «Եվրագիտություն» ընկերությանը (Euroscience), Ամերիկյան աստղագիտական ընկերությանը (AAS), Խաղաղօվկիանոսյան աստղագիտական ընկերությանը (ASP), Եվրոպական ֆիզիկական ընկերությանը (EPS), Վիրտուալ աստղադիտարանների ալյանսին (IVOA), Մոլորակային տվյալների միջազգային ալյանսին (IPDA), Աստղագիտությունը մշակույթում եվրոպական ընկերությանը (SEAC), Ժամանակակից աստղագիտության ընկերությանը (SoMA), Եվրոպական ենթատարածաշրջանային աստղագիտական խորհրդին (SREAC), «Տեղեկատվական տեսություններ և կիրառություններ» միջազգային գիտական ընկերությանը (ITHEA), «Գիտությունը և քաղաքակրթությունը Մետաքսե ճանապարհին» միջազգային ընկերությանը (ISSCSR), Հայկական ֆիզիկական ընկերությանը (APS), Հայկական աստղագիտական ընկերությանը (ArAS):

Արեգ Միքայելյանը 2020 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին, 6 անգամ ճանաչվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող, 2019 թ. ստացել է ՌԴ տուրիզմի միջազգային ակադեմիայի մեդալ, 2017 թ.՝ «Տիգրան Մեծ» մեդալ: 2010 թ. Արեգ Միքայելյանին շնորհվել է ՄԱՄ-ՅՈՒՆԵՍԿՕ հավաստագիր: 2005 թ. արժանացել է Համաշխարհային գագաթնաժողովի էլեկտրոնային գիտության մրցանակի, Եվրասիական աստղագիտական ընկերության տարեկան մրցանակի:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին